Ծուշանիկ Կուրղինյան

Ասույթներ

- Ամեն օր ապրել եմ ամեն օրվա հետ ու անցել իմ ճամփով . իսկ կյանքից ետ չմնալու պատճառով շտապել եմ հույժ, ու որքա՜ն ծաղիկներ կորցրել ճանապարհին, որքա՜ն նախշուն ծաղիկներ . . .
- Սիրում եմ ես ինձ ու հիանում ինձանով ու օրհնում իմ անունը . . . իսկ երբ կինը սիրում է ինքն իրեն՝ մենակ է հավիտյան:
- Ասում են կյանքը կատակ է . ո՛չ, կյանքը ծաղկոց է, ուր մենք փոխանակ վարդ քաղելու, միմոսություններ ենք անում, որ փշերին չդիպչենք:
- Սուտ է, որ լսելիքը միայն ականջն է . երգը ես լսում եմ ամբողջ մարմնով . երգից հուզվում են իմ բոլոր զգայարանները:
- Քրիստոնեությունը սկսել է ճեղքվածքներ երևան հանել իր հսկայական կառուցվածքի ամուր պատերում: Այդ նրա համար է, որ նա կյանքի հետ մի ճամփա չէր կարող բռնել, կյանքին նման լինել:
- Քննադատը նման է պարողի, որի համար ո՛չ նայող կա, ո՛չ էլ նվագածություն: Վա՜յ կրիտիկոսին, որ երկար պարել ու շատ կոտրատվել է սիրում:
- Ազգը ատել անհնարին է ու դատապարտելի՝ նրան կուրորեն սիրելը:
- Սեփականությունը փակում է մեր հոգու աչքերը ու բթացնում զգայարանները:
- Ով հարգում է ժամանակը, նա չի ապրում անպտուղ:
- Ես տեսա՝ հավատը փախչում էր եկեղեցուց: Աղջիկս կտեսնի նրան քաղաքից դուրս, թոռս՝ չի տեսնի նրան:
- Ասում են կնոջ ուղեղի քաշը պակաս է տղամարդու ուղեղի քաշից: Ես միշտ այդ իմ պակասը լրացնում եմ իմ սրտից:

- Որքա՜ն ափսոսում եմ, որ պիտի մեռնեմ մի օր ու նախանձում եմ ինձնանից հետո ապրողներին, որոնց բաժին է ընկնելու նոր կյանքը, նոր բաղձանքները:
- Պետք է լայն սիրտ ունենալ նեղ չապրելու համար:
- Կինը կատարյալ՝ կուշանա, վասնզի տղամարդու հակումները դեպի նա դեռ չեն բյուրեղացած:
- Կրոնը հին գինի է, որ արբեցնում է մարդուն, պղտորում գիտակցությունը և կռվել տալիս հարևանների հետ:
- Կրոնը բռնակալների համար ամպհովանի է, որի ձգած ստվերի տակ հանգչում են նոքա ոճիրներից հետո անդորր ժամանցի համար:
- Երբ նայում եմ քահանային, ինձ թվում է, թե նա ծեփված է խնամքով և կյանքի ձայնը չի հասնում նրա զգայարաններին:
- Ես բախտ ունեցա տեսնել աղատատենչ հույզերի մրրիկները: Դժվար է նրանց խափանելը, վասնզի բռնությունն է ջրում նրա արմատները:
- Ազատություն սիրողին բանտը դուռ չունի, շղթան՝ ծանրություն:
- Գրողի վարած կյանքն ու երկերը չպիտի շփոթել, վասնզի առաջինը իրենն է, երկրորդը՝ մերը:
- Մասսան հեղաշրջելու համար չպետք է մոռանալ նրա հոգեբանությունը:
- Սոցիալիստական հեղափոխության ժամանակ զոհերի կորուստը չեն ողբում . ինքը կռիվն է, որ զոհերի ու արյան ուղիով ապահովում է գալիքի փրկությունը:
- Զարգացող արդյունաբերությունը ինքն է սնում իր գերեզմանափորներին:
- Պոետներից բախտավորն եմ ես, որ դեռ մթի միջից գուշակում էի լույս բերողների անհերքելի հաղթանակը:
- Պոետներից բախտավորն եմ ես, որ ներբողում էի ստրուկների թագավորությունը:
- Հարկավոր է հաշտվել, որ մեծ գործը մեծ սխալներ կունենա:
- Ներել հեղափոխության թշնամուն, նշանակում է ընկերանալ նրան:
- Կոմունիզմի հաղթանակը նրանումն է, որ անխուսափելիորեն կոմունիզմագրվում են մասսաներն ամենուրեք:
- Ներկա մամուլն ես հարգում եմ այն պատճառով, որ նա իր ցեխոտ տապանով փակել է հնի նեխված բերանը:

- Արդի պոետերն արբած են հեղափոխությունով, ուստի նրանց ներելով հանդերձ պետք է սպասել զգաստության ժամին:
- Մայրենի լեզուն չիմացողը նման է անտառը մտած մարդուն, որ ազատ կարողանում է շվացնելով նմանվել զանազան թռչունների:

1913 թ .